69. ՍԱՐԽՈԾ ՄՈԽԻՐ

Վախտով Ըստամբոլա մեչ Մոխիր անունով մարթմ կսարխոշնա, կբոոա կասի. - Ըստամբոլ ես կծախեմ, վիր լազմ ի՝ թո գյա: Խաբար կէրթա, կինի թակավորու ականջ, թե՝ մարթմ կայներ ի կբոոա. Ըստամբոլ ես կծախեմ, վիր որ լազմ ի, թող գյա:

Թակավոր կասի. - Կնացեքյ էդա մարթ վո՞վ ի, պիրեքյ մո զիկ:

Կուգյան Մոխիրին կասեն. - Մոխի՛ր, էրթանքյ, քյե թակավոր կկանչի:

Մոխիր էն գյախ կիմնա ուր արած կաբահաթ, կէրթա կաոնի մեկ շուշա արաղ, մեկ շուշա գյինի, կտնի ծոց. կէրթա, կէրթա թակավորու իրես կկայնի:

Թակավոր կասի. - Տյու՞ ես Ըստամբոլ ծախող:

Ջինքյ կթանի վեր թակավորու ոտաց, արաղի շուշեն, գյինու շուշեն ծոցեն կխանի, կդնի անանճ, կասի. - Ամա՛ն, թակավոր ապրած կէնա, ես խանբար չիմ, առնողն էսա, ծախողն՝ էսա. շուշեքյ նշանց կուտա:

Կասի. - Էդա զի չես կանա կանդրմիշ անե:

Կասի. - Ամա՛ն, թակավոր, զի մեկ օր օր տուր, ես էն շուշեյիտեկաց արած քյե նշանց տամ:

Մոխիր կասի. - Կնացեքյ ֆլանն մանիլի գյլիխ մորե կորմ կա, որ մորից էլե կոր ի, էնոր առեքյ պիրեքյ: Կնացեքյ ֆլանն մանիլի քյեոշեն մեյ խա մորե անգյանլմ կա, նա՛ ծեռ կա, նա՛ ոտ:

Կէրթանն էրկուսն էլ կպիրեն: Էն կորն էլ, անգյանլն էլ, կտանեն կտնեն թակավորու անանճ: Էդա Մոխիր կբաշլայի արաղ-գյինի խմցուցել էդա կորուն էնանն անգյլին: Որ էդա էրկուս խորոտ կանրխոշնան, էդա գյինու կանղանխ, որ կոր կպոնի ուր ծեռ, անգյանլին կասի. - Ինգյե՛ր տե, էսա գյինին կնմանի ուտումա արուն, ըսկուն կարմիր ի:

Մոխիր թակավորուն կասի. - Թակավո՛ր, կտիսնա՞ս, մորե կոր ի, ի՞նչխ կիտի գյինու կարմիր, սիվղակ էլնել:

Էն անգյանլ կուրուն կասի. - Դե՛, շատ մի խումե, որ էլանա վեր, լանգյեմ կզանեմ քյե, կխատուցեմ:

Մոխիր կդանոնա թակավորուն կասի. - Թակավոր կտիսնա՞ս, մորե որ էլե նա՛ ծեռ ունի, նա՛ ոտ: Իրար չկանա տեպնե: Կտիսնա՞ս գյինու-արաղու մարիֆանթն ի՞նչ ի: Զիկ ի՞նչ կանբանանթ կա, արաղ-գյինին էր զիկ ըսկուն անել տվող:

Թակավոր էդա Մոխիրին կասի. - Տյու շատ խելանցի մարթ ես, քյե արի զի վանզիր:

Մոխիր կէլնի վանզիր: Մեկ օր, էրկու օր, ամիսմ կընցնի, կտիսնա, որ մեռելմ

կտանեն կխորեն, կէրթա, կմոտոխասանա, մեռելին կասի. - Տրե՛ք գյետին էդա մեռել:

Կդնեն գյետին:

Կասի. - Ջատացե՛ք:

Կզատանան:

Մոխիր կնստի մեռլի ակնջին, կասի. - Կէրթաս էնտեխ Կրոբոո մեխանաջի կա, Խամուլ անունով մեխանաջի կա, էն էրկուս զի շատ արաղ, գյինի են տվե, էնոնց մուշթարին եմ, կէրթաս էնոնց զիզնից պանրև կանես, թե որ իմ ահվալ կխարցուցեն, ասա՝ Մոխիր էլե վանզիր, էղրով դյունեի ինչ քյաքյ էլնել թո խասկնան:

Կզատանա մեռլից կասի. - Դե՛, էկեքյ ծեր մեռել վերուցեքյ:

Կէրթանն թակավորուն կասեն. - Քյո վանզիրն էկավ մեռել իտիր գյետին, մե զատացուց մեռլից, կզվավ մեռլի ակնջին չենքյ կիտե ի՛նչ ասաց: Սորա էլավ վեր, մե ասաց՝ էկեքյ ծեր մեռել տարեքյ:

Թակավոր կկանչի վանզիրին կասի. - Տյու մեռել դրիր գյետին, ի՞նչ ասիր, արե դողրի ասա, թե չէ՝ քյո վիզ կկտրեմ:

Ինչխ էր ասե մեռլին, դողրին կասի թակավորուն:

Թակավոր կծծղա, Մոխրին վանզիրութնից կխանի դյուս, բեղ ամսական կուտա, կասի. - Կնա՛, էլ մեզ ասանվան պես կե՛, խմե՛, քյո քյեֆն արա: